ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«13» «սեպտեմբերի» 2024 թ. № 366-Լ

«ՀԱՅԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐԻ ԵՎ ՍՅՈՒՆԻՔԻ ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՏԱՏԵՂ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N897-Ն որոշման հավելվածի 4-րդ կետով և 2015 թվականի սեպտեմբերի 17-ի N1072-Ն որոշման հավելվածի 7-րդ կետով, ինչպես նաև հաշվի առնելով շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2024 թվականի սեպտեմբերի 10-ի ՈՆ/31.2.2/11789, ՈՆ/31.2.2/11790 և սեպտեմբերի 11-ի ՈՆ/31.2.3/11878 զեկուցագրերով ներկայացված նյութերը (լրացված հատատեղի հաշվեգնահատման ցուցակը և հատատեղի անձնագիրը, քարտեզ-սխեման) կապված Հայաստանում ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստանում անտառների դիմակայունության բարձրացում՝ մեղմացման միջոցառումների շնորհիվ հարմարեցման և գյուղական վայրերում կանաչ տարածությունների ընդլայնման միջոցով» ծրագրի կատարման ապահովման հետ.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության Վանաձորի և Սյունիքի անտառտնտեսություն մասնաճյուղերի անտառներում 2024 թվականին լրացուցիչ հատատեղերը՝ համաձայն հավելվածի:

2. Շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ս. Մարկոսյանին՝ սահմանված կարգով ապահովել Վանաձորի և Սյունիքի անտառտնտեսություն մասնաճյուղերում հատատեղերի հատկացման, բնափայտի մթերման և իրացման աշխատանքների իրականացումը:

3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Ա. Մեյմարյանին:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ

9/13/2024

X

ԱՐԱՄ ՄԵՅՄԱՐՅԱՆ

Signed by: MEYMARYAN ARAM 2412830247

Ա. ՄԵՅՄԱՐՅԱՆ

«13» սեպտեմբերի 2024թ.

ք. Երևան

Հավելված
շրջակա միջավայրի նախարարի
2024թ. սեպտեմբերի «13» -ի N 366- Լ հրամանի

Լրացուցիչ հատատեղեր «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության Վանաձորի և Սյունիքի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերի

հ/հ	«Անտառտնտեսություն» մասնաճյուղերի անվանումը	Ընդհանուր ծավալը, խմ	որից շինափայտ,խմ	Այդ թվում ըստ հատման տեսակների					
				Խնամքի		Սանիտարական		Անտառվերականգնման	
				Ընդհանուր ծավալը, խմ	որից շինափայտ, խմ	Ընդհանուր ծավալը, խմ	որից շինափայտ, խմ	Ընդհանուր ծավալը, խմ	որից շինափայտ, խմ
1	Վանաձորի անտառտնտեսություն մասնաճյուղ	41.06	0.00	41.06	0.00	0.00	0.00	0.00	0.00
2	Սյունիքի անտառտնտեսություն մասնաճյուղ	44.76	0.00	44.76					
Ընդամենը		85.82	0.00	85.82	0.00	0.00	0.00	0.00	0.00